



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

21 ապրիլի 2022 թվականի թիվ 58-Ս

ք. Երևան

«ԱՄԵԴԻԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի ԹԻՎ 38-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՓՈՓՈՒԹՅԱՆ ԹՈՂԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով «ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության կողմից 2022 թվականի ապրիլի 08-ին Հանձնաժողով մուտքագրված վարչական բողոքը՝ *պարզեց*.

«ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ դիստրիբյուտոր) վարչական բողոք է ներկայացրել Հանձնաժողովի 2022 թվականի մարտի 24-ի «ԷՖ ՆԵԹ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ ցանցային օպերատոր) նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճելու մասին» թիվ 38-Ա որոշման (այսուհետ՝ վարչական ակտ) դեմ:

Հանձնաժողով ներկայացված վարչական բողոքում դիստրիբյուտորը նշել է՝

«Գտնում ենք, որ Հանձնաժողովը բազմակողմանի և լրիվ չի ուսումնասիրել վարչական վարույթի նյութերը, սխալ է մեկնաբանել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասը, ինչի հետևանքով կայացված վարչական ակտը համարվում է ոչ իրավաչափ:

Այսպիսով, համաձայն «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի՝ *Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:*

Նշված իրավական դրույթից հետևում է, որ Հեռարձակողի տեսալսողական ծրագրի վերահաղորդման համար օպերատորը պետք է կնքի համապատասխան պայմանագիր Հեռարձակողի կամ դիստրիբյուտորի հետ: Այսինքն, միայն տվյալ պայմանագրի ուժով է ծագում օպերատորի՝ տեսալսողական ծրագրի վերահաղորդման իրավունքը:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Ընկերությունը դիմում է ներկայացրել Հանձնաժողովին, ով հանդիսանում է սույն ոլորտի կարգավորող մարմին և ունի առաքելություն իրականացնելու վերահսկողություն ոլորտում տարբեր իրավասու սուբյեկտների գործունեության նկատմամբ՝ հայտնելով «Охота и Рыбалка» տեսալսողական ծրագրի անօրինական վերահաղորդման վերաբերյալ: Հանձնաժողովը

կարճելու մասին որոշում կայացնելու հիմքում դրել է միայն այն փաստը, որ 10.03.2022թ. ժամը 15:00-15:30-ն ընկած ժամանակահատվածում իրականացված մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից չի վերահաղորդվում «Охота и Рыбалка» տեսալսողական ծրագիրը:

Հանձնաժողովը չի կատարել Ընկերության կողմից ներկայացված ապացույցի գնահատում և Վարչական ակտով չի անդրադարձել Ընկերության կողմից էլեկտրոնային գրագրությանն առ այն, որ «ԷՖ ՆԵԹ» ՍՊ ընկերությունն ընդունում է, որ մինչև 2022 թվականի փետրվար ամսվա կեսերը իրականացրել է տեսալսողական ծրագրի անօրինական վերահաղորդում: Այն, որ Հանձնաժողովի կողմից 10.03.2022թ. իրականացված մշտադիտարկման արդյունքում հաստատվում է, որ օպերատորը չի վերահաղորդում տեսալսողական ծրագիրը, չի կարող համարվել բավարար հաստատելու այն փաստը, որ օպերատորը մինչև մշտադիտարկում իրականացնելը վերահաղորդել է տեսալսողական ծրագիրը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի՝ *վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:*

Նշված իրավական դրույթից հետևում է, որ վարչական մարմինը պետք է գնահատի այն բոլոր ապացույցները, որոնք առկա են գործում և անհրաժեշտ են տվյալ գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

Ինչպես վերը նշվեց Հանձնաժողովը չի գնահատել Ընկերության կողմից ներկայացված ապացույց հանդիսացող նամակագրությունը, որով հստակ արտահայտվում է օպերատորի վարքագիծը՝ տեսալսողական ծրագրի վերահաղորդման ուղղությամբ:

Եվս մեկ անգամ հարկ եմ համարում ընդգծել, որ ըստ նամակագրության՝ ցանցային օպերատորի տնօրենը հաստատում է, որ մինչև 2022 թվականի փետրվար ամսվա կեսերն «ԷՖ ՆԵԹ» ՍՊ ընկերությունը վերահաղորդել է «Охота и Рыбалка» տեսալսողական ծրագիրը, սակայն դրա համար չի ունեցել որևէ թույլտվություն և/կամ պայմանագիր: Այլ կերպ ասած հենց ցանցային օպերատորն է ընդունել իր կողմից իրականացված խախտումը, սակայն Հանձնաժողովն անտեսել է նշված փաստը, չի գնահատել այն որպես ապացույց և առաջնորդվել է բացառապես մշտադիտարկման արդյունքներով: Պարզ է, որ 10.03.2022 թվականին նշված ընկերությունը հնարավոր է այլևս չի իրականացրել տեսալսողական ծրագրի վերահաղորդում, սակայն դա դեռևս չի հաստատում այն փաստը, որ մինչև տվյալ ժամանակահատվածն ընկերությունը չի վերահաղորդել այն, մասնավորապես այն դեպքում, երբ վերջինս ընդունում է վերահաղորդման փաստը: Ավելին, այն, որ ցանցային օպերատորի կողմից չի ներկայացվել որևէ բացատրություն կամ պարզաբանում, այսինքն՝ չի առարկել Ընկերության կողմից ներկայացված բողոքի դեմ, ևս մեկ անգամ հաստատում է, որ վերջինս իրականացրել է անօրինական վերահաղորդում:»

Դիստրիբյուտորը վարչական բողոքով խնդրում է վերացնել Հանձնաժողովի 2022 թվականի մարտի 24-ին ընդունած թիվ 38-Ա վարչական ակտը և կայացնել նոր որոշում:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 73-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ դիստրիբյուտորի կողմից Հանձնաժողովի 2022 թվականի մարտի 24-ի թիվ 38-Ա որոշման դեմ բերված վարչական բողոքն ընդունել է վարույթ, քանի որ վարչական բողոքը համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածների պահանջներին:

Հանձնաժողովը դիստրիբյուտորի վարչական բողոքի վերաբերյալ ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները:

Վարույթի ընթացքում ցանցային օպերատորը 2022 թվականի ապրիլի 20-ին Հանձնաժողով ներկայացրած գրավոր բացատրությամբ հայտնել է այն մասին, որ «Охота и Рыбалка» տեսալսողական ծրագիրը ցանցային օպերատորի կողմից չի վերահեռարձակվել և չի վերահեռարձակվում:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական բողոքի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված լրացուցիչ ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով դիստրիբյուտորի դիմումը՝ 2022 թվականի մարտի 04-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել էր թիվ 4 վարչական վարույթը: Վարչական վարույթը հարուցվել էր ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագրային հիմունքների դիմումում նշված «Охота и Рыбалка» տեսալսողական ծրագրի վերահաղորդելու փաստով, որոնց տարածման իրավունքը պատկանում է դիստրիբյուտորին:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 42-րդ հոդվածով իրականացրել է ցանցային օպերատորի մոտ մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և 2022 թվականի մարտի 10-ին արձանագրել է, որ ցանցային օպերատորի հեռարձակող կայանում ժամը 15:00-15:30-ն ընկած ժամանակահատվածում իրականացված մշտադիտարկման արդյունքում ցանցային օպերատորի կողմից չի վերահաղորդվում «Охота и Рыбалка» տեսալսողական ծրագիրը:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակիցների կողմից ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի տեղում դիտարկման արդյունքներին և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի խախտում չի հայտնաբերվել:

Ուստի, Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով Հանձնաժողովը 2022 թվականի մարտի 24-ին թիվ 38-Ա որոշմամբ կարճել է ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված թիվ 4 վարչական վարույթը:

Անդրադատնալով վարչական բողոքում բերված այն փաստին, որ Հանձնաժողովը չի իրականացրել վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրության օրենսդրական պահանջը և չի պարզել, թե նախքան 2022 թվականի փետրվարի 14-ը, արդյո՞ք ցանցային օպերատորն իրականացրել է խնդրո առարկա հանդիսացող տեսալսողական ծրագրի վերահաղորդում, թե ոչ, ապա փաստենք, որ Հանձնաժողովը որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող պետական մարմին Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացնում է մշտադիտարկում, իսկ ցանցային օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և Օրենքի 42-րդ հոդվածով սահմանված դրույթներին համապատասխան իրականացրել է ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, որի արդյունքում էլ արձանագրել է, որ 2022 թվականի մարտի 10-ին խնդրո առարկա հանդիսացող տեսալսողական ծրագիրը ցանցային օպերատորի կողմից չի վերահաղորդվում, որն էլ հիմք է հանդիսացել վարչական վարույթը կարճելու համար:

Նշենք նաև, որ Օրենքով ցանցային օպերատորների կողմից իրենց հեռարձակած տեսալսողական հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները պահպանելու համար պարտավորություն սահմանված չէ, և քանի որ վարչական վարույթի շրջանակներում լրացուցիչ ապացույցներ ձեռք չեն բերվել, ուստի Հանձնաժողովի կողմից 2022 թվականի մարտի 10-ի ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը վարչական վարույթի շրջանակներում ծառայել է որպես վարչական վարույթի ապացույց և հիմք է հանդիսացել 2022 թվականի մարտի 04-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված թիվ 4 վարչական վարույթը կարճելու համար:

Հանձնաժողովը որպես վարչական մարմին վարչարարությունն իրականացրել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով և ապահովել է փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդված) և Հանձնաժողովի կողմից իրականացվել է իրավաչափ վարչարարություն, իսկ ընդունված վարչական ակտը ընդունվել է Օրենքի դրույթների պահանջների պահպանմամբ և իրավաչափ է:

Հետևաբար, Հանձնաժողովի կողմից ընդունված իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքով:

Սակայն, Դիստրիբյուտորի կողմից 2022 թվականի ապրիլի 08-ին վարչական ակտի դեմ բերված վարչական բողոքով կրկին ներկայացվել են դեռևս վարչական վարույթի շրջանակներում ներկայացված ապացույցները (դիստրիբյուտորի և ցանցային օպերատորի միջև էլեկտրոնային նամակագրության արտատպվածքը), որոնք ըստ դիստրիբյուտորի վկայում են ցանցային օպերատորի կողմից կատարված իրավախախտման փաստը:

Հանձնաժողովի կողմից վարչական բողոքի հիման վրա կրկին ուսումնասիրվել են ներկայացված փաստերը և ապացույցները, որի արդյունքում հայտնի է դարձել, որ

ներկայացված ապացույցները փետրվար ամսվա փաստեր են (14.02.2022թ-ի և 25.02.2022թ-ի), որոնցով չի հիմնավորվում այն փաստը, որ Հանձնաժողովի կողմից 2022 թվականի մարտի 04-ից մինչև 2022 թվականի մարտի 24-ն ընկած ժամանակահատվածում իրականացված վարչարարության ընթացքում ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվել է խնդրո առարկա հանդիսացող տեսալսողական ծրագիրը:

Այսպիսով, վարչական բողոքի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում՝ առաջնորդվելով ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացրած ապացույցներով, Հանձնաժողովն ամրագրում է, որ Հանձնաժողովը որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող պետական մարմին Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացնում է մշտադիտարկում, իսկ ցանցային օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Տվյալ դեպքում, Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի հոդվածի 2-րդ մասով՝ վարչական վարույթը հարուցել է դիստրիբյուտորի դիմումը Հանձնաժողովում ստանալու օրը՝ 2022 թվականի մարտի 04-ին և վարչարարության ընթացքում Օրենքի 42-րդ հոդվածով սահմանված դրույթներին համապատասխան իրականացրել է ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, որի արդյունքում էլ 2022 թվականի մարտի 10-ին արձանագրել է, որ խնդրո առարկա հանդիսացող տեսալսողական ծրագիրը ցանցային օպերատորի կողմից չի վերահաղորդվում, որն էլ հիմք է հանդիսացել վարչական վարույթը կարճելու համար՝ 2022 թվականի մարտի 24-ին վարչական ակտի ընդունմամբ: Դիստրիբյուտորի կողմից վարչական բողոքի շրջանակում լրացուցիչ ապացույցներ չեն ներկայացվել և ցանցային օպերատորը իր ներկայացրած գրավոր բացատրությամբ հայտնել է այն մասին, որ «Охота и Рыбалка» տեսալսողական ծրագիրը ցանցային օպերատորի կողմից չի վերահեռարձակվել և չի վերահեռարձակվում:

Հանձնաժողովը վերլուծելով և գնահատելով սույն գործի հետ կապված փաստական հանգամանքները արձանագրում է, որ վարչական վարույթի իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև վարչական բողոքի շրջանակներում ներկայացված ապացույցները, որոնք ներկայացվել էին դեռևս վարչական վարույթի շրջանակներում ավելի վաղ ժամանակահատվածի փաստեր են և չեն ընդգրկում վարչական վարույթի իրականացման ժամանակահատվածն, ուստի արձանագրում ենք, որ ցանցային օպերատորի կողմից Օրենքի խախտում թույլ չի տրվել:

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված ժամկետում իրականացված վարչարարության արդյունքում 2022 թվականի մարտի 24-ին ընդունված թիվ 38-Ա վարչական ակտն իրավաչափ է և օրենքով սահմանված պահանջներին համապատասխան է ընդունվել, նշում է պարունակում այն բոլոր փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք Հանձնաժողովին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշումը:

Հետևաբար, Հանձնաժողովի կողմից ընդունված իրավաչափ վարչական ակտը չի կարող ուժը կորցրած ճանաչվել:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Կարգավորող պետական մարմինը՝ իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 18-րդ մասերը սահմանում են.

«1. Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Ուղղակի դիտարկման արդյունքները կարող են համադրվել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալներին:

18. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց:»

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական բողոքը քննարկելիս առաջնորդվում է ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացվող ապացույցներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է՝

բ) մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ ապացույցները ներկայացման պահին եղել են Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի ժամկետից ավելի վաղ ժամանակահատվածի (14.02.2022թ-ի և 25.02.2022թ-ի), ուստի ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի, 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասը, 76-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. Մերժել «ԱՄԵԴԻԱ» ՄՊ ընկերության վարչական բողոքը՝ անփոփոխ թողնելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2022 թվականի մարտի 24-ի թիվ 38-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

21 ապրիլի 2022թ.

ք. Երևան